Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐՅԱՆ*

13. ԴՈՒՐՅԱՆ ԳՐԱԳԵՏՐ

Դուրյան մեր նոր գրականության ամենեն համակրելի դեմքերեն մեկն է։ Ան կպատկանի սերունդի մը, որ արևմտահայ գրականության ամենեն մռայլ շրջանին հասավ, և չկրցավ իր հոմը գտնել։ Համիդի ամենեն դժնեմ տարիներն էին, երբ դեռ նոր աչքերն էր բացած արևմտահայ գրականությունը և ճիգեր կըներ հասուննալու։ Այդ սերունդի բոլոր դեմքերն ալ չկրցան լրման հասնիլ, կամ կես թողուցին իրենց պտղաբերությունը։ Տարբեր պայմաններու մեջ ավելի բեղմնավոր կրնային դառնալ Արփիարյան և Զոհրապ, Կամսարական ու Բաշալյան, Կյուրճյան ու Սիպիլ, և ավելի տարբեր կաճեր սերունդը, որ հաջորդեց իրենց, արևմտահայ գրականության դժբախտ սերունդը, որ հորիզոն չունեցավ և գնաց լրագրության և ուսուցչության ասպարեզին մեջ ամլանալ կամ լթել գրիչն ու խամրիլ։ Բախտավոր բացառություններ եղան անոնք, որ այնուամենայնիվ շարունակեցին գրել կամ գացին ապաստանիլ արտասահման կամ հասունցան հոն։

Մենք պատանիներ էինք դեռ այն օրերուն, ու Դուրյանն էր, Պետրո՛ս Դուրյանը, մեր ներշնչումներուն միակ աղբյուրը։

Դպրոցի գրասեղաններեն կսկսի մեր սերունդի սերը Դուրյանի հանդեպ։ Մեր կյանքին այն շրջանն էր, երբ բանաստեղծությունն էր մեր պաշտամունքի, մեր ոգևորության միակ առարկան։

Մեր այն տարիքին ո՞վ չէր հափշտակված Պետրոս Դուրյանով։ Մեզմե ո՞վ չէր փորձած անոր նմանիլ, ըլլալ անոր պես հիվանդ, անոր պես դառնացած ու անոր պես մեծ։ Ո՞վ մեզմե երկյուղածությամբ ուխտի չէ գացած Սկյուդար անոր շիրիմին, ու գոց չէ ըրած անոր քերթվածները՝ «Տրտունջք»-ը, «Լճակ»-ը, «Իմ մահը», փորձելով երբեմն զանոնք կապկել ալ։

Երանի կուտայինք պերպերյանցիներուն, որոնք կշնչեին անոր մասունքներուն առընթեր ու կրնային անոնցմով ամեն վայրկյան ներշնչվիլ։ Իսկ մենք, կեդրոնականցիներս, Սկյուդարեն այնքան հեռու, դժբախտներ էինք։ Կերջանկանայինք միայն այցե այց։ Կեդրոնականն էր դեռ Մեծարենց, երբ այցկ մը դարձին, գողտրիկ քերթված մը գրեց՝ «Պետրոս Դուրյանի շիրիմին առջև».

... Հույզով մեռա՛վ ան, հուշքով կապրի՜
դեռ,
Ծառերուն նման, որ թարմ ու դալար
Իր գերեզմանեն կելնեն քովն ի վեր։
Իսկ մենք՝ ապրելով՝ ընդմիշտ կը մեռնինք
Ոգորումներեն, հույսերեն մոլար,
Եվ՝ մոռացումն է զոր հետ կը տանինք։

Մեր զմայլանքը Պետրոս Դուրյանեն շատ շուտ պիտի հասներ Եղիշե Դուրյանին։ Ան ալ սկսեր էր արդեն հայտնվիլ զմայլելի իր քերթվածներով, երբ դեռ դպրոցական գրասեղաններու առջև էինք մենք։ Արձակ այն էջը, զոր գրեր էր 1898-ին, Օշական այցելելե հետո, հայ գրական հավաքածոներու զարդը պիտի շարունակե մնալ և զոր գոց ըրինք մենք, երբ դեռ Կեդրոնականն էինք, էջ, ուր մեզ կպատմեր Դուրյան ուխտի իր այցը Մեծ Վարժապետին՝ Մեսրոպի ոտքը, մոտենալու համար անոր դամբարանին, «ծնրադրել ձույլ հիացումի մեջ, ու համբույրի տաք շրթունքներով քարի մը պաղ երակներուն մեջեն ծծել հոգեկան կայծեր՝ երկար դարերով իրենց կրակը անշեջ պահող նվիրական նշխարնե-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի Ա. և Բ. համարներից։

րեն», չուզելով սակայն հավատալ, թե անոնց տակ փոշի դարձած ոսկորներ կգտնվեին, չուզելով հավատալ, թե ափ մը հողի տակ կրնային թաղել կենդանի գիրը։ Ու հետո, հուզումով արբշիռ, տենչացեր էր ան.

«Ու եթե Մեծ Վարդապետին ստվերագիծ ձեռքը տեսնեի գեթ՝ ոսկի մագաղաթի մը վրա, կամ աննման քահանայապետին գոհար գիրերով զարդարված լանջապանակը տեսնեի գեթ, առաջին ու անգիտակից շարժումս պիտի ըլլար անգամ մըն ալ ծնրադրել ու թախանձագին խնդրել իրմե.

«— Աղվոր Ա Բ Գ-եդ դաս մը տուր ինձի»։

Այս արձակ զմայլելի կտորը առաջին անգամ մեզ բերավ կարդաց Հրանտ Ասատուր, որ հաճելի ընթերցումներով կհամեմեր աշխարհաբար լեզվի իր դասերը Կեդրոնականի մեջ, և անկե հետո Դուրյան մեր սիրած անուններեն մեկը դարձավ, այն սակավաթիվ դեմքերու կարգին, որոնց կհանդիպեինք ուրիշ առիթ թերթերու մեջ, և որոնք կրնային գոհացում տալ մեր գրական հետաքրքրությանն։

Բայց, ավա՜ղ, հազվադեպ էին այդ առիթները։

Շրջան մըն էր, երբ Կոստանդնուպոլսո մեջ կասած էր հոգեկան ամեն թռիչք. հայ գրականությունը հոգեվարքի մեջ էր։ Հին անունները իրենց պատյանն էին քաշվեր ու տարին անգամ մը միայն կերևային մահկանացուներուն, թերթերու բացառիկ թիվերուն մեջ կամ տարեգրքերու էջերեն, հետո դարձյալ իրենց պատյանը քաշվելու համար։

Մեր միակ սնունդը հին թերթերու և պարբերականներու հավաքածուներն էին, զորս քանի մը առանձնաշնորհյալներ կերթային պրպտել գաղտուկ ազգային մատենադարանի դարակներուն մեջ։ Կեդրոնական վարժարանի հարակից սրահի մը կողքին խուցի մը մեջ կդպված էին անոնք, և Բարգեն վարդապետ, ապագա Կիլիկիո կաթողիկոսը, որ Ղալաթիո քարոզիչ էր այդ տարիներուն, Կեդրոնականի տղոցմեն կկանչեր, որպեսզի իրեն օգնեն։ «Հայրենիք»-ի, «Մասիս»-ի, «Արևելք»-ի հին հավաքածուները կթղթատեինք հաճիշտակությամբ և կոգևորվեինք իր ընձյուղման մեջ փշրված սերունդի մը գրական ճիգերով։

Այլապես այդ օրերու պատանիներս ուրիշ գրական սնունդ չունեինք, բայց եթե «Մասիս»-ը միայն, մասամբ ալ «Արևելյան մամուլ»-ը, որ կստացվեր Իզմիրեն։ Պետք է ըսել, որ Տիգրան Արփիար կհամառեր չմեռցընել հայ գիրը, և ատեն-ատեն կհաջողեր հոդվածներ կորզել երբեմնի համբավներեն։ Գրիգոր Զոհրապ, Եղիա Տեմիրճիպաշյան, Միքայել և ուրիշներ երբեմն կերևային «Մասիս»-ի մեջ, նոր անուններու և սկսնակներու կողքին։

Դուրյան այդ օրերուն էր, որ տպեց իր մի քանի ամենեն գեղեցիկ ոտանավորները Տիգրան Արփիարի «Մասիս»-ներուն մեջ։ Արդարև այն քանի մը գողտրիկ քերթվածները, որոնք լույս տեսան հոն 1904-ի Մեծ պահքի շաբաթներուն, բանաստեղծ մը կհայտնեին Եղիշե Դուրյանի մեջ։

«Տյառնընդառաջ»-ն էր անոնցմե առաջինը, ուր արդեն քերթողը իր դիմագիծը կզգացներ և զոր բացառիկ հաճշտակությամբ կկարդային այն օրերուն։

Բայց «Անառակ»-ն էր, որ Դուրյանի նվիրագործումն եղավ։ Իրրև բանաստեղծություն պզտիկ գոհար մըն էր ան խոսքի ու ձևի, որ «Տյառնընդառաջ»-ին կհաջորդեր «Մասիս»-ի մեջ.

Անե՛ծքդդ, Հայր, փոխեց ոսկիս մութ պըղինձի,
Բայց քանի որ շամբուշ կուռք մը պետք էր ինձի,
Ես պըղինձո՛վ ալ պատրանքնե՛ըս ձուլեցի։
Անե՛ծքդդ, Հայր, դարձուց նաշի՛հըս սև հացի,
Բայց քանի որ սեղան մը շվայտ պետք էր ինձի,
Ես սև հացովն ալ հեշտ պատա՛ռըս ծամեցի։

Մեծարենց այդ բանաստեղծության տպավորության տակ էր, որ Կեդրոնականեն «Մասիս»-ին ղրկեց Եղիշե Դուրյանի «գրական կենդանագիր»-ը, ուր, հանձին անոր, Պետրոսն էր որ կողջուներ.

«Ինքը բանաստեղծ ծնած է արդեն, ինչպես իր եղբայրը։ Եվ ի՜նչ մտերիմ, ինչ սերտ շեշտ մը, ինքնաբուխ զգացման, բառի ու բացատրության տեսակ մը շնորհալի ու գողտրիկ բնականություն ունին երկու եղբայրներն ալ, որոնք կնույնանան մեր դատումին առջև։ ... Կարծես միևնույն Դուրյանն է, որ կխոսի մեզի, միևնույն Դուրյանը՝ որ սակայն կրած է տարիքին ու կոչումին հարկադրած փոփոխությունները. և մեծ հաճույք մը չէ՞ միթե տեսնել մեր վաղամեռ սիրական քերթողին շարունակությունը՝ իր հարազատին մեջ։ Ու ո՞չ ապաքեն Եղիշե եպիսկոպոսը մեր երևակայած Պետրոսն է. հասուն տարիքեն բանաստեղծը, նվազ մելամաղձիկ, ավելի խոհուն ու հզոր, միշտ քաղցր ու միշտ խանդավառ»։

Եվ անկե հետո ա՛լ նվիրագործվեցավ Դուրյան։ Արմաշ էր դեռ իրը քերթող հայտնված ատեն, և Իզմիրի մեջ, ուր 1904-ին գացեր էր իրը առաջնորդ, արդեն քերթողը

սկսավ պտղաբերել, հորինելով քանի մը տասնյակ քերթվածներ, որոնք 1909-ին ամփոփվեցան «Հովվական սրինգ»-ին մեջ։

***

«Հովվական սրինգ»-ը նույնքան ջերմությամբ ընդունվեցավ, որքան իր առաջին երգերը։ Պահ մըն էր արևմտահայ գրականության մեջ, երբ ծարավը կար գեղեցիկ խոսքի։ Հուրրիեթի առաջին տարին էր և մթնոլորտը լեցված էր ճառերու աղմուկով։ Մեծարենց արդեն չկար, Սիպիլ լռեր էր, ու շրջեր էր թաղարը, որուն մեջ Կոստանդնուպոլիս դժգույն ծաղիկներ փորձեր էր հասցընել զույգ մը տասնյակ տարիներ, Համիդի ամենեն դաժան օրերուն, իսկ անոնք, որ կրցեր էին դիմանալ, տիրող աղմուկին մեջ շշմած, տուրք կուտային ճառերուն։ Արտասահմանը նոր կբանար իր դեմքը մեզի, ու նոր կհայտնվեր շքեղ երրորդությունը՝ Սիամանթո, Թեքեյան և Վարուժան, որ փառքով պիտի պսակեր շուտով արևմտահայ քերթողությունը։

Բնական էր, որ սիրով ողջունվեր «Հովվական սրինգ»-ը։ Վկա այն օրերու մամուլը, որ խանդաղատանքով լեցուն է։ Արտաշես Հարությունյան, որ այդ տարիներու պաշտոնական գրախոսն էր, առաջիններեն մեկը եղավ, որ փութաց քերթող մը նվիրագործել արևմտահայ գրականության մեջ։ Սապես կվերջացներ ան իր գրախոսականը.

«Հովվական սրինգ հայտնություն մըն է։ Դուրյան սրբազան բազմաթիվ տիտղոսներ ունի, մաքուր եկեղեցականի մը և բազմահմուտ բանասերի մը համբավը կվայելե։ Քիչեր իրեն չափ լավ գիտեն իրենց լեզվին գաղտնիքներն ու շատ քիչեր աշխարհաբարը կգրեն իրենին նման գեղեցկագետ ու մաքրաճաշակ հասկացողության մը համեմատ։ Այդ բոլորը շատ ճիշտ է միայն անշուշտ, բայց արդարություն ընենք իրեն և ճանչնանք նաև զինքն իբր մեր ամենեն տաղանդավոր բանաստեղծներեն մին»։

Տիրան Զրաքյանը, իր կարգին, շուշացավ արձագանքելու Մալկարացի Կարոյին։ Դեռ մռայլը չէր կաշկանդեր իր հոգին, երբ այդ տուրքը կուտար, և դեռ հստակ մտածումներ կգտնես դժբախտ Ինտրային գրչին տակ, որ շուտով պիտի մոլորեր շփոթության բավիղներուն մեջ, Տրիրոն եղբայր դառնալե և աղանդավորի զառանցանքներու մեջ իր միտքը փշրելե հետո խսպառ։ «Շիրակ»-ի մեջ իր ստորագրած հոդվածը «Հովվական սրինգ»-ի մասին, ինչ-ինչ բաներ մատնանշելով հանդերձ, «կհաստատեր հրճվագին, որ Եղիշե Եպիսկոպոս Դուրյան ճշմարիտ բանաստեղծության հասած է անոր մեջ, խոր ու մելամաղձիկ բանաստեղծության, և առանց դույզն բաղձանքի ու սեթևեթի, ամենայն բնականությամբ և հակամայս, իր իմացականության հատուկ ճամբաներով»։

Օշական, որ նոր հայտնվեր, ինքն ալ իբրև արձակագիր և գրադատի առաջին մարդանքները կլներ, և պետք է ըսել, որ շատ ավելի ողջամիտ և կշռված քան ինչ որ պիտի ըլլային իր հետագա դատաստաններեն շատերը, խանդավառությամբ ողջունեց ինքն ալ երբեմնի իր ուսուցիչը, ըսելով, որ «Հովվական սրինգը անակնկալ մը ու միանգամայն լուրջ հայտնություն մը եղավ մեզի», և որ «խորապես բանաստեղծ, շատ զգայուն հոգիով, զարգացած, նրբացած և դիլետանտ իր մտածումով՝ մեր մեջ Դուրյան Եղիշեն կներկայացնե իդեալ տիպը գրական հսկաներուն»։

Գրողներու այն խումբն անգամ, որ «երիտասարդ» կհռչակեր ինքզինք, Վահրամ Թաթուլի բերնով կհայտներ զմայլագին, թե «Դուրյան սրբազան կպատկանի Նարեկացիներու և Շնորհալիներու քերթողական ու խնկասուրբ ու լուսագեղ շառավիղին», և կավելացներ. «Անոր հանգամանքը մերինը չէ, իրա՛վ, այլ ադով հանդերձ մենք կհարգենք իր բազմակողմանի իմացականությունը և իր արվեստին կզմայլինք»։

***

Միահամուռ չափով ողջունված իր քերթողական երախայրիքին մեջ, Դուրյան ա՛լ այնուհետև կուռք մը դարձավ։ Ճիշտ է՝ իր ստեղծած պաշտամունքին մեջ դեր կատարած էին անձին հմայքը, զոր վաղուց շահեցուցեր էին տարիներու իր վաստակը մտավոր տարբեր գետիններու վրա, ինչպես նաև հմայքը, զոր իր անունն իսկ իրեն կբերեր իր արյան և մանավանդ իր հոգեկան կապին համար այն մյուս Դուրյանին հետ։ Բայց իր շուրջ ստեղծված զմայլանքի այս մթնոլորտը շատ բան կպարտի քերթողական իր արժեքներուն ալ։

Նախ հոգևոր քնարին վրա ինքնատիպ նոր լար մը կդներ ան։ Վերջին դարերուն շատեր էին նյութեր քաղեր Աստվածաշունչեն հոգևոր երգեր շարադրելու համար. բայց ոչ ոք չէր կրցեր ելլել տափակութենեն վեր։ Դուրյան կուգար արվեստագետի մոգական ուժով ոչ միայն գտնելու աղատել իր ընտրած սովորական նյութերը, այլ նաև բարոյախոսի, քարոզչի, խրատողի շապիկը ուսերեն նետել հաճախ։

Հետո, արտահայտության բոլորովին նոր ձև մը կբերեր հայ քերթողության մեջ. բառերու այլազանության մտահոգությունը, որ, իրավ է, երբեմն ծայրահեղության կառաջնորդեր արվեստագետը, բայց նաև կաղա-

տեր զայն հասարակ-տեղիքներե, բառերու կրկնութենե, միօրինակութենե։

«Հովվական սրինգ»-են հետո ցամքեցավ կարծես իր ներշնչման հոդաբուխ ակը։ Հետագային շատ քիչ եղան իր քերթողական ստեղծագործութիւնները և անոնք ալ որևէ նորութիւն չբերին։ Սրինգը սպառած էր իր շունչը։ Փոքրիկ գրքոյկը, զոր 1926-ին տպեց Երուսաղեմի մեջ «Դրվագներ մանուկ Հիսուսի կյանքեն» խորագրին ներքև, մանուկներու համար գրված ոտանավորներ են, որոնց մեջ շունչը կպակսի, մինչ տաղաչափը կհամառի դիմանալ՝ փորձելով ոտանավորներուն ձևը գոնե փրկել։

Ինչպես ժամանակին ալ զայն բնորոշեց այս տողերը գրողը, Դուրյան սրբազան պոռթկում չունեցավ։ Ներսեն կրակ չթափեց։ Ան թողուց, որ հոգին հասունանա, ու լավ մը ճանչնա աշխարհը։ Ան հոգևոր բաներուն կապեց իր սիրտը ու անոնցմե դուրս տեսիլք չճանչցավ։ Ու հոգևոր տեսիլքներուն մեջեն դիտեց աշխարհը, որպեսզի առանց կրքի տեսնե, և առանց շփոթության։ Ան երբեք աշխարհ չմտավ ինչպես ըրեր էին մեր հին վանականները, և Աստուծո հետ խոսած ատեն, երգեր էին վարդն ու բլբուլը և աղվորությունը Աստվածածնին։

Դուրյան սրբազան ոչ իսկ մարդոց մոտեցավ իր երգը պատմելու ատեն անոնց։ Ան քնար իսկ չունեցավ։ Ան սարի մը կատարը նստավ՝ ծառի մը շուքը ճարած։ Հեռուն էին քաղաքն ու իր ժխորը և իր շուրջը ոչխարներու հոտ մը կար միայն, որ կարածեր լռիկ։ Հոն եկան իրեն իր տեսիլքները, ու հոն շունչ տվավ իր սրինգին։

Մեր հին տաղասացները լայն կբանային իրենց լուսամուտը և չէին վախնար, որ աշխարհը կմտնե ներս։ Անոնք երբեմն իրենք կերթային փնտռելու դուրսի աշխարհը։ Մտքի մարզանքի պտուղ չէին ամեն ատեն մեր վանականներուն սանձարձակ պատկերները. անոնք կյանքեն էին քաղված հաճախ։ Վանքի խուցին մեջ նստած, պիտի կարենա՞ր երգել Կոստանդին Երզնկացին կամ Գրիգորիս Աղթամարցին, Հովհաննես Թլկուրանցին կամ Ղազար Սեբաստացին այնպես ինչպես երգած են։

Դուրյան վանքը մնաց միշտ։

Մեր հին բանաստեղծներեն շատերը սիրած են հակադրությունը։ Մանավանդ մեր տաղասացներուն մոտ շատ կհանդիպինք դեմ դիմաց հանված դրախտն ու դժոխքը, այս աշխարհի կյանքն ու անդենականը, հոգին ու մարմինը, չարն ու բարին, գիշերն ու ցերեկը, ամառն ու ձմեռը, որոնք հաճախ կվիճին դիմառնաբար և կմաքառին որպեսզի զիրար ընկճեն։

Դուրյան սրբազան ևս իր քերթվածներուն մեջ դեմ դեմի կհանե երկու աշխարհներ, ոչ թե հոգևորականն ու աշխարհիկը, կամ բարոյականն ու անբարոն իրենց սովորաբար հասկցված իմաստով։ Ոչ իսկ մեղավորն ու անմեղն է, որ դեմ դիմաց կուգան միշտ անոնց մեջ։ Դուրյան կհակադրե կիրքը, որ կխլրտի մարդ էակին մեջ, ու կամքը նույն այդ մարդ էակին, որ կփորձե իր կիրքերն ընկճել։

Աստվածաշունչը անսպառ աղբյուր էր իրեն համար այդ հակադրություններն ստեղծելու, մանավանդ Ավետարանի առակները, ինչպես «Անառակ»-ը, ուր ան կհակադրե «անեծք»-ն ու «օրհնություն»-ը։

Նմանություններ ստեղծելու ճիգը, զոր մեր հին քերթողներեն շատերն ունեցած են, ինչպես Նարեկացին ու Շնորհալին, Դուրյան ալ ունի։ Բայց ան չափազանցության չի տանիր հնչական խաղերը և կգոհանա երաժշտական պարզ քմայքով մը, որ հաճելի է սակայն ականջներու.

Ցնորակոծ մրտքին հածումովը ցիր,
Ձեռքը երկնցուց քղանցքին Հիսուսի։

Հովը հանդարտիկ՝ չուներ ելևէջ,
Շունչ մը չէր խաղար տերևներուն մեջ։

Անեծքդդ, Հայր, պերճ պատմուճանդ
դարձուց քուրձի։
Անեծքդդ, Հայր, ճրագդս դարձուց
ճայրոտ բոցի։

Բայց երբեմն ալ գրչի զբոսանքի տպավորություն կթողու։ Ահա քանի մը տող «Հուդայի համբույրը»-են.

Անոր համբույրը չուներ
Շողի մը բորբ շառափը,
Որ բիբերեն կկաթե
Հուզումներու տարափը։

Անոր համբույրը փրշեց
Խորշակի մը խարշափը,
Փոթորկելով ոսկեփունջ
Երազներու թոթափը։

***

Տիրականը բանաստեղծն էր գրագետ Եղիշե Դուրյանի մեջ, հոգևոր ներշնչումներու, միստիկ ապրումներու և ավետարանական պատգամներու բանաստեղծը, որ զանոնք տափակության ու հասարակ տեղիքներու ցանցերեն փրկած, երգեց մտածման նոր հրանգներով և ձևի կատարելությամբ մը, հանդիսանալով «մեր օրերու Շնորհալին», ինչպես զայն որակեր է Ամենայն Հայոց Կաթողիկոսին կոնդակը։

Չենք գիտեր՝ իր սքեմի՞ն պետք է վերադրենք, թե իր խառնվածքին, եթե իր քերթվածները չկրնան դուրս գալ իրենց կրոնական պատյանեն։ Բայց հայ գրականության պատմությունը պիտի չկարենա զայն ուրանալ իբր բանաստեղծ՝ հայ քերթողներուն հանգրվանները պատմած ատեն, որովհետև, թեև ամփոփված կրոնական պատյանի մեջ, իր քերթվածները կրցեր էր պահել շունչով ու խորհուրդով, և ունեցեր էր ձևին ալ մտահոգությունը։

***

Դուրյան բանաստեղծը արձակի մեջ ալ երբեմն բանաստեղծ է, մերթ ջերմ ու հաղորդական՝ ինչպես հեզասահ առվակ, և մերթ ալ զուսպ ու քանդակված՝ կիտվածանկարի մը նման։

Դուրյան գրաբարյան մըն էր առջի օրերուն, ինչպես էին իր սերունդեն շատերը, ինչպես էին, օրինակ, Մրմրյանը, Մելքոն Կյուրճյանը, Սիպիլը, բոլորն ալ Սկյուդարի մեջ հասունցած իրեն պես։ Գրաբարի պաշտամունքն ունեին բոլորն ալ ի սկզբան, ու քմծիծաղով կնայեին նոր լեզվին վրա, որ արդեն մարմին առած, կուռճանար ու կգեղեցկանար տակավ։ Գրաբարի երկրպագուներեն շատերը վարպետներ պիտի դառնային հետո աշխարհաբարի մեջ, ինչպես Սիպիլը, որ երբեմն գրաբարի մոլի պաշտպան՝ պիտի գար միանար աշխարհաբարը կերտողներու փաղանգին։

Դուրյանի լեզուն, ի սկզբան, որձևէգ այն լեզուն է, ուր գրաբարի մագիլներուն մեջ դեռ կտառապի մեր նոր գրական լեզուն։ Ճիշտ է, շրջան մըն է, ուր պարտված են Գարագաշյաններն ու Գուրգենները գրաբարը կյանքի կոչելու իրենց ցնորքին մեջ, բայց դեռ մարդիկ կան, որ չեն ուզեր զիջիլ դիրքերը ու դեռ կհավատան, որ կրնան հարություն առնել մեռյալ լեզուները։ Ու երբ կզիջին աշխարհաբար գրել՝ չեն կրնար զայն չպճնել գրաբարի զարդերով։

Դուրյան տակավ աշխարհաբարի ջերմ պաշտպան դարձավ և Հակոբ Գուրգենի հոբելյանին օրը, ինչպես հիշեցինք, պանծացումն ըրավ գրական մեր նոր լեզվին՝ զայն ընդունակ հռչակելով լրիվ արտահայտելու դարը։

Ճիշտ է, Դուրյանի լեզուն չկրցավ հասնիլ վերջնական բյուրեղացման, բայց ան զրտվեցավ իր խորթություններեն, գրաբարի ամեն հետք թոթափեց վրայեն։ Ինչպես ըսինք, Դուրյան մինչև վերջն իսկ չկրցավ հրաժարիլ վաղուց արդեն լքված բառեր մոռացության գրկեն դուրս կորզելու իր փորձութենեն։

Դուրյան բանաստեղծ էր մանավանդ իր քարոզներուն մեջ։ Հոն արդեն հոգին կքակեր իր կապանքները,— ալիք-ալիք կլայնանար, թռիչք կառներ ոլորտե ոլորտ, ու բառերը, իրենք ալ, սանձերն արձակած, կհորդեին, առանց սակայն ճիգի, առանց բռնազբոսության։

Ջոպանյան, բանաստեղծ Դուրյանը պատկերած ատեն, կընդգծեր «մանավանդ հմայքը, որ կարտաշնչվի քարոզներեն այդ եկեղեցականին, որուն խոսքը, միշտ ծանրաբեռն՝ հոծ մտածումով ու բազմակուտակ հմտությամբ, ունի նաև միշտ թրթռում մը ներքին, մտքի լայնաբաց թևերու համար այլ հզոր շարժման մը շունչը, նոր այդ խոսքն իր բոլոր ծանրությամբ միջոցին մեջ կբարձրացնե և ունկնդիրներու հոգվույն վերև զայն կառկախե՝ իբր թավ ու խոր ներդաշնակություն մը բարձրություններե իջնող»։

Դուրյան թարգմանություններ ալ փորձեց։ Առաջին հերթին Շնորհալին սկսավ վերածել աշխարհաբարի։ Դեռ Կեդրոնականն էինք մենք, երբոր Բաբգեն վարդապետի «Լույս»-ին մեջ, 1905-ին, լույս տեսան հաջորդաբար «Այսօր անճառ»-ը, «Աշխարհ ամենայն»-ը, «Առաւօտ լուսոյ»-ն, «Նորոգող»-ը, «Արարչական»-ը, «Աստուած անեղ»-ը, մինչ Հիվանդանոցի «Ընդարձակ օրացույց»-ներուն մեջ լույս կտեսնեին «Նորաստեղծեալ»-ը, «Նայեաց սիրով»-ը։ Փառք մը չբերին սակայն իրեն այս վերածումները։ Գրչի զբոսանքներ էին ավելի, որոնց կարիք ալ չուներ մեր գրականությունը։ Անոնք նույնիսկ վեճի դուռ բացին։ Հազիվ սկսեր էին լույս տեսնել անոնք, «Բյուզանդիոն»-ի մեջ երևցավ կծու հոդված մը։ Հոդվածը գավառեն կուգար, ու ստորագրված էր «Պոնտոսի թղթակից» (հետո միայն իմացանք, թե այդ ստորագրության տակ հայտնի գրագետ մը ծածկված է, Մելքոն Կյուրճյանը, երբեմնի իր դասընկերը, որ Գաստեմունի աքսորված էր այն օրերուն)։ Հետո սկսավ բավական սուր բանավեճ մը երկու հին դասընկերներու միջև։

Իր վերածումներեն նմուշ մը ահա.

Նայե՛ սիրով, ո՞վ Հայր գթած,
Մեզի որ քու ենք ըստեղծված.
Հրեշտակներուն գունդն ու բանակ
Տրկարներուն դի՛ր պահպանակ.
Փորձանքե զմեզ փրկե վերեն,
Ու խավարի չար դևերեն,
Որ թե՛ ցերեկ և թե՛ գիշեր
Քեզ անդադար փառք տանք, ո՛վ Տեր։

Ի՞նչ թանկարժեք բան կրնային բերել նման վերածումները. մնաց որ Շնորհալին թարգմանվելու կարիք ալ չուներ հասկնալի ըլլալու համար հավատացյալներուն։ Հոգևոր

երգերը ժողովուրդին լեզվին վերածելու այս ձգտումը չէ՞ որ տափակութիւններով լեցուցած է բողոքականներու երգարանները...։

Դուրյան թարգմանութիւններ փորձեց ուրիշ լեզուներե՛ալ, մասնավորաբար ֆրանսացի բանաստեղծներե։ Գրչի զբոսանքներ էին ասոնք ալ, որոնցմով չհարստացավ անշուշտ հայ գրականութիւնը։ «Հովվական սրինգ»-ի քերթողը թարգմանութիւնց վրա կհագցներ պարզապես տաղաչափելու իր կիրքին վերջին պապակը։ Թեոդիկ անոնց մենաշնորհն ուներ իր տարեցույցներուն համար։ Հատ մըն ալ ինձ ղրկած է Դուրյան, երբ 1923-ին «Նավասարդ»-ը սկսեր էի հրատարակել Բուխարեստի մեջ։ Թարգմանութիւն մըն էր Սյուլլի Պրյուդհոմեն,— որ իր սիրած բանաստեղծներեն մեկն էր Հյուգոյի, Լը Գոնտ դը Լիլի և Ալբերտ Սամենի հետ,— «Հոգեվարքը».

Կուշտ եմ բառերե. լըսելու անհամ
Խոսքեր սուտ ու սոնք.
Հնչյունները կուզեմ. ո՛չ, չըհասկընամ,
Այլ ըզգամ զանոնք։
Մեղեդի մը՝ ուր հոգին կը սուզի
Եվ որ զիս անչան
Պիտի զառանցքեն տանի երազի,
Երազեն մահվան։

Իր թարգմանութիւնց մեջ երբեմն ակներև է ճիգը բնագրին հավատարիմ մնալու, և ադկե՝ կնճռոտ ստողեր ալ. բայց հաճախ կրցած է մնալ սահուն ու վճիտ, և իր թարգմանութիւնները կկարդաս բնագրի մը պես, ինչպես սա հատվածը Ալբերտ Սամենի «Ապաքինյալին աղոթքը»-են.

Տե՛ր իմ, ցամքած բաժակիս մեջ շիթ մը
լոկ կաթեցուր,
Ոսկեհոսան գինվո շիթ մ՚որ ունենա լայն
կարշակ.
Սիրտս երեխա մ՚է անհույս, որ կը ճչե
աղեկտուր.
Տե՛ր իմ, տուր որ վերջապես երիթամած
բերնիս տակ
Դիեցուցիչ հին ստինքին դեռ ցայտե
կաթն անուշակ։
Շնորհե՛ ինձի կամք, ուժ, հանդգնութիւն
ու կորով,
Առնացի պետքն առումի ու տիրաբար
նըվաճման,
Թող որ ըզգամ՝ ընդլայնված հոգիս խորն
անխըռով՝
Մեծ զորության բացվիլը կարմիր վարդի
մը նըման։

***

Գլուխը փակելե առաջ, կարելի չէ չխոսիլ իր հասցուցած գրական սերունդին վրա ալ։

Եթե Օրմանյան հոգևորական նոր սերունդին մեջ տրամաբանելու, վիճելու, փաստելու, տեղի չտալու կիրքը մտցուց, Դուրյան իր հասցուցած սերունդին սիրցուց որոնելու և մտածելու հաճույքը, ինչպես նաև հաճույքը, զոր մարդուն կպարգևե շարշարանքը արքը, տահայտության ձևը գտնելու։ Ադկե է, որ Դուրյանի սերունդը, մտավորական իր պատրաստության հետ, արտահայտվելու ձիրք ալ ունեցավ, բեմեն թե գրչով։

Դուրյանի շնորհիվ Արմաշ իր ուրույն լեզուն, իր ուրույն ոճն ունեցավ և անով մարզվեցավ ամբողջ սերունդ մը, որ սիրեց քալել իր վարպետին հետքերուն վրայեն։

Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանն էր սակայն, որ կոչված էր դառնալու Արմաշի գրական փառքը։ Ան ժառանգեց երկու վարպետ՝ Օրմանյանն ու Դուրյանը իր մտավոր պատրաստության մեջ. ժառանգեց այս վերջինին գրական շնորհներն ալ. և ավելի ևս բյուրեղացուց զանոնք, արձակի մեջ հանդիսանալով անստգյուտ վարպետ մը ոճի, իսկ իր քարոզներուն մեջ համալելով խորքի ու ձևի կատարելության մը, որուն ոչ ոք չէ կըրցած հասնիլ մեր օրերուն մեջ։ Իր «Լեռան բարձունքեն»-ը Վարուժանի և իմ «Նավասարդ»-ին մեջ 1914-ին՝ մեզ հայտնություն մըն էր եղեր այն ատենեն, և նախ Վարուժանի հետ, հետո ինքս առանձին միշտ թախանձեր ենք, որ առաջ տանի իր գրական փորձերը։ Իր վարչական, ուսուցչական, քարոզչական և ուսումնասիրական զբաղումները գրագետ մը խլեցին մեզմե. բայց ինչ որ տվավ առիթե առիթ, կարժե որ արևուն բերվի։ Ան որ Խրիմյանն ու Դուրյանը անմահացուց, պիտի ունենա՞ սակայն զինքն ըմբռնող մը լրիվ ու զինք լույսին հանող մը, ու վաղվան սերունդը պիտի ճանչնա՞ «Թորգոմ սքանչելի»-ն, ինչպես զայն անվանեց Տիգրան Կամսարական անոր վաղահաս մահը ողբացած ատեն։

... Կարելի չէ Թորգոմին չկցել Արմաշի մյուս պարծանքներեն մին, Կոստանդնուպոլսի այժմու պատրիարք Գարեգին Տրապիզոնցին։ Զգենք անստգյուտ հոգևորականը և ուսուցիչը որ ան եղավ միշտ, ճշմարիտ գրագետ մը ևս կա անոր մեջ, և իր գրությանց մեջ խորքն ու ձևը հավասարապես կբյուրեղանան ու զայն կհանդիսացնեն իսկական վարպետ մը ոճի։ Ով որ կարդացած է Նարեկի իր թարգմանությունը, չի կրնար հիացումե տարբեր զգացումով համակվիլ։ Եթե Դուրյան ձախողեցավ Շնորհալին վերածած ատեն, Գարեգին արքեպիսկոպոս արժանի եղավ Նարեկացիին։ Քասիմի ծաղրանկար թարգմանութենեն և Թորգոմ եպիսկոպոսի և ուրիշներու առավել կամ նվազ հաջող փորձերեն հետո, Գարեգին պատրիարքինը թարգմանության գոհար մըն է։

(Շարունակելի)